ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 20

«11» 04 2022 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի ՆԻՍՏՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՄԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիան 2022 թվականի մարտի 11-ի նիստում քննարկել է Հայաստանի Հանրապետության դատախազության 2021 թվականի աշխատանքի արդյունքները և ընդունել համապատասխան որոշում, որի կենսագործումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 22-րդ հոդվածի 5-րդ մասով և 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ ե մ՝

1. Ապահովել Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի 2022 թվականի մարտի 11-ի նիստում ընդունված որոշման կենսագործումը (11.03.2022թ. նիստի N 1 արձանագրությունը կցվում է):

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալների վրա՝ ըստ նրանց հանձնարարված ոլորտների:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազներին և դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Արձանագրություն N 1

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի
2022 թվականի մարտի 11-ի նիստի

Նախագահում էր՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը:

Մասնակցում էին կոլեգիայի անդամներ՝ Հ.Ասլանյանը, Վ.Հարությունյանը, Ա. Աֆանդյանը, Գ. Բաղդասարյանը, Ս. Գալյանը, Ս. Հովհաննիսյանը, Վ. Ջանազյանը, Ա. Հարությունյանը, Ա. Գրիգորյանը, Ա. Սիմոնյանը, Ա. Առաքելյանը, Ա.Փանոսյանը, Ա. Չախոյանը, Ա. Մարտիրոսյանը, Ա.Մարուխյանը, Վ.Ռաֆայելյանը, Լ. Չարխիֆալակյանը, Ե.Ավագյանը, Ս. Ամիրխանյանը:

Ներկա էին՝ ՀՀ զինվորական դատախազի տեղակալները, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազներն ու դատախազը, ՀՀ զինվորական կենտրոնական բաժինների պետերը, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազները, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականներն ու օգնականները:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության դատախազության 2021թ. աշխատանքի արդյունքների ամփոփումը:
2. Դատախազների երդման արարողություն:

Զեկուցողներ՝
ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ՝ Ա.Աֆանդյան, Հ.Ասլանյան, Գ. Բաղդասարյան, Ս. Գալյան:

Լսեցին՝ Ա.Աֆանդյանին, Հ. Ասլանյանին, Գ. Բաղդասարյանին, Ս.Գալյանին:
Արտահայտվեց՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը:

Լսելով և քննարկելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներ Ա. Աֆանդյանի, Հ.Ասլանյանի, Գ. Բաղդասարյանի և Ս. Գալյանի զեկուցումները Հայաստանի Հանրապետության դատախազության 2021 թվականի աշխատանքի արդյունքների մասին՝ Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիան նշում է, որ համակարգի մարմինները, իրականացնելով ՀՀ Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» ՀՀ օրենքով իրենց վերապահված լիազորությունները, ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ, ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումներով, զգալի աշխատանք են կատարել հանրապետությունում օրինականությունը պահպանելու և հանցավորության դեմ համակարգված ու արդյունավետ պայքար

կազմակերպելու, քննության որակը բարելավելու, հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվության և պատժի անխուսափելիությունն ապահովելու ուղղությամբ:

Այսպես.

2021թ. ընթացքում հանրապետությունում արձանագրվել է հանցագործության 30.245 դեպք, նախորդ տարվա 26.468 դիմաց, որոնցից 16.438-ը կամ 54,4 %-ը՝ Երևան քաղաքում:

Նախորդ տարվա համեմատությամբ հանցագործության դեպքերն աճել են 3777-ով կամ 14.3%-ով, ընդ որում Երևան քաղաքում դեպքերը աճել են 2546-ով, կամ 18.3 %-ով:

Հանցագործության դեպքերի աճին զուգահեռ 2%-ով աճել է դրանց բացահայտման ընդհանուր ցուցանիշը՝ 57,7% նախորդ 55.7%-ի դիմաց:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ, արձանագրվել է հանցագործության դեպքերի աճ բոլոր հանցատեսակներով, բացառությամբ մարդու և պետական ծառայության ու կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործությունների:

Արձանագրվել է առանձնապես ծանր հանցագործության դեպքերի աճ 54-ով կամ 18.2%-ով՝ 350 դեպք /նախորդ տարվա 296-ի դիմաց/, բացահայտումը կազմել է 58%:

Ծանր հանցագործության դեպքերը աճել են 370-ով, կամ 9.1 %-ով՝ 4447 դեպք նախորդ տարվա 4077 դիմաց, բացահայտման տոկոսը կազմել է 34,4%:

Միջին ծանրության հանցագործության դեպքերը ևս աճել են, արձանագրվել է 7988 դեպք՝ նախորդի 7466 դիմաց/, բացահայտումը կազմել է 45.1%:

Ըստ առանձին հանցատեսակների՝ հանցագործությունների շարժընթացն ունի հետևյալ պատկերը.

<u>Մարդու դեմ ուղղված հանցագործություններ</u> - 2021 թվականի ընթացքում արձանագրվել է մարդու դեմ ուղղված հանցագործության 4375 դեպք, որից 1675-ը կամ 38%-ը՝ Երևան քաղաքում, իսկ 2700-ը կամ 62 %-ը՝ ՀՀ մարզերում:

Փաստորեն, նախորդ տարվա համեմատ (4410 դեպք), մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերը նվազել են 35-ով կամ 0.8 %-ով, ինչը, ընդհանուր հանցավորության աճի ֆոնի վրա, դրական ցուցանիշ է, հատկապես այն տվյալի հաշվառմամբ, որ 2021 թվականին ավելացել է մարդու դեմ ուղղված նոր հանցատեսակ՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 137.1 հոդվածով:

Մտահոգիչ է այն, որ աճել են մարդու դեմ ուղղված ամենածանր հանցատեսակները՝ սպանությունը՝ 11-ով կամ 20%-ով /50-60/, սպանության փորձը՝ 7-ով կամ 17.9%-ով: Հաշվետու ժամանակահատվածում, արձանագրվել է սպանության փորձի 46 դեպք, որից չի բացահայտվել է 10-ը, իսկ սպանության նախապատրաստության 1 դեպք, որը բացահայտվել է:

Երևան քաղաքում սպանության փորձի դեպքերի թիվը նվազել է 1-ով կամ 5.3%-ով /19-18/, իսկ մարզերում աճել 9-ով կամ 45%-ով /20-29/:

Փաստենք, որ սպանության դեպքերի թվի աճն արձանագրվել է Երևան քաղաքում կատարված դեպքերի հաշվին. աճը 15-ով կամ 136.4%-ով /11-26/:

Չբացահայտված սպանության 10-ը դեպքից 2-ը վերաբերում է անձի անհետ կորելու փաստին: Սպանության դեպքերի բացահայտումը կազմել է 77.1%, նախորդի 70,1%, իսկ սպանության փորձինը 84,1%, նախորդի 80.6%-ի դիմաց, թերևս դրականն այն է, որ նշված դեպքերի աճի պայմաններում բարելավվել է դրանց բացահայտումը:

48-ով կամ 4.7%-ով /1024-976/ նվազել են առողջությանը դիտավորությամբ վնաս պատճառելու դեպքերը: Ընդ որում՝ Երևան քաղաքում նշված դեպքերը նվազել են 21-ով կամ 5.8%-ով, ՀՀ մարզերում՝ 27-ով կամ 4%-ով:

2021 թվականին արձանագրվել է առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս հասցնելու դեպքերի նվազում 6-ով կամ 2.7 %-ով /224-218/: Ընդ որում՝ Երևանում նշված

դեպքերը նվազել են 7-ով կամ 8.4%-ով /83-76/, իսկ մարզերում աճել են 1-ով կամ 0.7%-ով /141-142/:

Մարդկանց թրաֆիքինգի արձանագրված դեպքերն աճել են 4-ով կամ 66.7%-ով /6-10/, ինչպիսի ցուցանիշը պետք է գնահատել դրական՝ հաշվի առնելով տվյալ տեսակի հանցագործությունների լատենտայնության բարձր հավանականությունը: Ընդ որում Երևանում աճը կազմել է 100% /3-6/, մարզերում՝ 1 կամ 33.3% /3-4/:

Նախորդ տարվա համեմատությամբ՝ կտրուկ աճել են նաև սեռական շահագործման դեպքերը /9-ը՝ նախորդ տարվա 1-ի դիմաց/:

<u>Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ</u> - 2021 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է սեփականության դեմ ուղղված 15.149 հանցագործություն, նախորդ տարվա 13.129-ի դիմաց, դեպքերն աճել են 2020-ով կամ 15.4%-ով՝ և հատել հանցագործությունների ընդհանուր զանգվածում 50%-ի ցուցանիշը: Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների բացարձակ մեծամասնությունը հափշտակություններ են. 2021 թվականի ընթացքում հանրապետությունում արձանագրվել է պետական կամ հանրային գույքի հափշտակության 418 դեպք նախորդ տարվա 383-ի դիմաց՝ աճը՝ 9.1%, և անձնական գույքի հափշտակության 13.303 դեպք՝ 11.583 ի դիմաց՝ աճը 1720 կամ 14.8%:

2021 թվականին ավազակության դեպքերն աճել են 2-ով կամ 5.1%-ով (39-41), գողության դեպքերը 1695-ով կամ 17.8%-ով (9523-11218), խարդախության դեպքերը 127-ով կամ 7.4%-ով (1716-1843), համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակության դեպքերը 27-ով կամ 17.5%-ով (154-181): Դրա հետ մեկտեղ արձանագրվել է կողոպուտի 17-ով կամ 10.4%-ով (163-146), բնակարանային գողությունների՝ 66-ով կամ 5.2%-ով (1258-1192); յուրացման կամ վատնման՝ 52-ով կամ 9.9%-ով (525-473) նվազում:

2021թ. արձանագրվել է սեփականության դեմ ուղղված հանագործությունների բացահայտման ցուցանիշի աճ՝ կազմելով 50.3%՝ 2020 թվականի 46.8%-ի դիմաց: Բացահայտվել է կողոպուտի դեպքերի 57.7%՝ նախորդ տարվա 52%, գողության դեպքերի 48.9%՝ նախորդ տարվա 42.6%, այդ թվում՝ բնակարանային գողությունների 27.2%՝ նախորդ տարվա 26.7%, խարդախությունների 57.8%՝ նախորդ տարվա 55%-ի, յուրացման կամ վատնման 54.4%՝ նախորդ տարվա 51.4%ի, տրանսպորտային միջոցը փախցնելու 80%՝ նախորդ տարվա 74.4%ի փոխարեն: Չնայած դրան՝ ավազակության բացահայտման ցուցանիշները նվազել են՝ կազմելով 73%՝ 2020 թվականի 75%-ի համեմատ, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ կատարված հափշտակությունների դեպքերը՝ 29.3%՝ 38.3%-ի համեմատ:

Անդրադառնալով սեփականության դեմ ուղղված առանձին հանցագործությունների կանխման, խափանման և բացահայտման ուղղությամբ կատարված աշխատանքին, Կոլեգիան արձանագրում է, որ բնակարանային գողությունների դեմ պայքարին ուղղված աշխատանքը դրական փոփոխություններ է կրել: Զգալի աշխատանք է կատարվել հատկապես մարզային համայնքներում տեսանկարահանող սարքերի տեղադրման և դրանց հաշվառման ուղղությամբ: Բնակարանային գողությունների դեպքերով ձեռնարկված օպերատիվ միջոցառումների արդյունքների աշխատանքային քննարկումներն ու դրանց հիման վրա քննության համատեղ պլանավորումը դատախազության ստորաբաժանումների մեծ մասում դարձել է աշխատաոճ: Միաժամանակ, բնակարանային գողությունների պատճառներն ու նպաստող պայմանները վերացնելուն ուղղված աշխատանքը համակարգված բնույթ չի կրում, այդ կապակցությամբ կատարվող դատախազական ահռելի աշխատանքը հասարակության անդամների կողմից անհրաժեշտ արձագանք չի ստանում, պետական և տեղական ինքնակառավարման պատասխանատու մարմինները օբյեկտիվ, իսկ երբեմն սուբյեկտիվ

պատճառներով հնարավորություն չեն ունենում ապահովելու դատախազների կողմից ներկայացված միջնորդագրերի պահանջների անհապաղ կատարումն այն դեպքում, երբ նախորդ տարիների փորձը ցույց է տվել, որ միջնորդագրերում նշված միջոցների գործադրումն էական դրական ազդեցություն է ունենում այս հանցատեսակի կանխման վրա:

Հաշվետու տարում արձանագրվել է նաև սեփականության դեմ ուղղված այլ հանցագործությունների աճ 230 դեպքով՝ 1193 դեպք նախորդ տարվա 963-ի դիմաց, որոնց մեջ խիստ մտահոգող է շորթման դեպքերի տարածումը՝ ինտիմ շփումներից և մասնավոր կյանքին վերաբերող տեղեկությունների ու լուսանկարների փոխանցումից հետո դրանք հրապարակելու սպառնալիքով գումար պահանջելու մեխանիզմով: Նշված դեպքերի նախականխման նպատակով նախատեսվում է սեղմ ժամկետում նախաձեռնել և իրականացնել հանրային իրազեկմանն ուղղված միջոցներ:

2021 թվականի ընթացքում ՀՀ տարածքում սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով նախապատրաստվել է 20.056 նյութ՝ նախորդ տարվա 16.669-ի դիմաց, հարուցվել է 10.506 քրեական գործ՝ նախորդ տարվա 9.164–ի դիմաց, մերժվել է 8.629-ը՝ նախորդ տարվա 7.034–ի դիմաց:

Վերացվել է քրեական գործի հարուցումը մերժելու մասին 83-որոշում, այդ թվում՝ 12-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից: 2021 թվականի ընթացքում սեփականության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ դեպքերով դատական կարգով բողոքարկվել է քրեական գործ հարուցելը մերժելու մասին 140 որոշում, որից 20-ը դատարանի կողմից վերացվել է: Դրանցից 8-ի դեմ բերվել է վերաքննիչ բողոք:

Հաշվետու ժամանակահատվածում դատավարական ղեկավարում է իրականացվել սեփականության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ 15.950 քրեական գործի՝ նկատմամբ՝ նախորդ տարվա 15.085-ի դիմաց, ինչը կազմում է հանրապետությունում քննված 37.510 քրեական գործերի՝ բացառությամբ զինվորական հանցագործությունների, 42.5%-ը: Ընդ որում՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազների կողմից դատավարական ղեկավարում է իրականացվել 401 քրեական գործի՝ նկատմամբ՝ նախորդ տարվա 208 քրեական գործի փոխարեն:

2021թ. սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով դատախազների կողմից տրվել է 1999 ցուցում՝ որից 214-ը՝ անմիջական հսկողության տակ չգտնվող գործերով: Գլխավոր դատախազի տեղակալի կողմից դատախազներին տրվել է 41 ցուցում, 1 քրեական գործով որոշում է կայացվել դատախազին վարույթից հեռացնելու մասին:

Հաշվետու ժամանակահատվածում սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով տրվել է օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ 571 հանձնարարություն, նախաքննություն իրականացնող 218 անձ հեռացվել է վարույթից՝ նախորդ տարվա 104-ի համեմատ, իսկ թույլ տրված խախտումների փաստերով ծառայողական քննություն իրականացնելու փաստերի վերաբերյալ դատախազների կողմից ներկայացվել է 100 միջնորդություն՝ նախորդ տարվա 82-ի համեմատ, որից 33 դեպքով հետաքննություն կամ նախաքննություն իրականացնող անձինք ենթարկվել են կարգապահական պատասխանատվության՝ նախորդ տարվա 18-ի համեմատ:

2021թ. քննված քրեական գործերից ավարտվել են 3.111-ը՝ կամ 19,5% նախորդ տարվա 3.780-ի դիմաց, որից 2081-ը կարճվել է, իսկ 1241 անձի վերաբերյալ 1017 քրեական գործ, կամ ավարտված գործերի 32.6 %-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան՝ նախորդ տարվա 1184 անձի վերաբերյալ 941 գործի փոխարեն: Վարույթը կասեցվել է 7.023 քրեական գործով, նախորդ տարվա 5.902-ի դիմաց, որից 6484-ը՝ անձը հայտնի չլինելու, իսկ 534-ը՝ անձի հետախուզման մեջ գտնվելու, 6-ը՝ այլ պատճառաբանությամբ:

2021թ. ՀՀ գլխավոր դատախազի կողմից վերացվել է քրեական հետապնդում չիրականացնելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին 17 որոշում: Նշված գործերից 7-ը հետագայում կարճվել է՝ վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով, 4 քրեական գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, այդ թվում՝ մեկով կայացվել է մեղադրական դատավճիռ, իսկ մնացած գործերի նախաքննությունը դեռևս շարունակվում է: Այսինքն՝ որևէ գործ արդարացման հիմքով չի կարճվել:

2021 թվականի ընթացքում սեփականության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով դատական կարգով բողոքարկվել է քրեական գործով վարույթը կարճելու մասին 90 որոշում, որից 19-ով դատարանի կողմից արձանագրվել է իրավունքի խախտում և սահմանվել վարույթն իրականացնող մարմնի՝ այդ խախտումը վերացնելու պարտավորությունը: Դրանցից 13-ի դեմ բերվել է վերաքննիչ բողոք:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով դատախազների կողմից ներկայացվել է 420 միջնորդագիր՝ նախորդ տարվա 188-ի համեմատ:

ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունում քրեական գործերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ լրջագույն խնդիր է առկա հափշտակված ջրամատակարարման ու ջրահեռացման խողովակների պատկանելության հարցը որոշելիս: Բանն այն է, որ թեև դրանք ՀՀ Կառավարության 1997թ. մարտի 14-ի որոշմամբ հանձնվել են համայնքների սեփականությանը, սակայն այդ համակարգերի հանձնում ընդունում որպես կանոն չի կատարվել, ավելին տեղական ինքնակառավարման մարմիններում դրանք հաշվառված, գույքային հաշվեկշռում ներառված չեն, իսկ պատասխանատու պաշտոնատար անձինք երբեմն տեղեկություններ չեն էլ ունեցել դրանց գոյության կամ տեղակայման մասին: Այս կապակցությամբ ՀՀ կառավարություն ներկայացված հաղորդման հիման վրա խնդրահարույց հարցերի քննարկման ու հստակեցմանն ուղղված աշխատանքները շարունակվում են:

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների արդյունքում պետությանը պատճառվել է 83.459.063 ՀՀ դրամ, որից վերականգնվել է 55.528.866 ՀՀ դրամ, իսկ ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ 1.574.021.235, որից վերականգնվել է՝ 316.395.741 ՀՀ դրամը:

Դատախազների կողմից մեղադրանք է պաշտպանվել սեփականության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ 661 քրեական գործով 819 անձի նկատմամբ /նախորդ տարի՝ 562 քրեական գործով՝ 683 անձի նկատմամբ/, որից 522 գործով 664 անձի նկատմամբ կայացվել են մեղադրական դատավճիռներ /նախորդ տարի՝ 467 գործով 573 անձի նկատմամբ/, 8 գործով 10 անձի նկատմամբ կայացվել են արդարացման դատական ակտեր՝ այդ թվում՝ 1-ը մեղադրանքից հրաժարվելու հիմքով /նախորդ տարի 12 քրեական գործ 16 անձի նկատմամբ/:

Դատապարտված 664 անձից 239-ը կամ 35.9 տոկոսը դատապարտվել են ազատազրկման, 244-ը կամ 36.7 տոկոսը՝ տուգանքի, 181 անձի կամ 27.2 տոկոսի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է փորձաշրջան: 2 գործով 3 անձի նկատմամբ կիրառվել են դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ:

8 գործերով 10 անձի նկատմամբ արդարացման դատական ակտերն էլ կայացվել են առաջին ատյանի դատարանների կողմից: Արդարացման 6 դատավճիռներով դատավարական ղեկավարում իրականացնող դատախազների կողմից բերվել են վերաքննիչ բողոքներ, որոնցից 5-ի քննությունը դեռևս ընթացքի մեջ է, իսկ մեկով վերաքննիչ դատարանը մասնակի բավարարել է մեղադրողի բողոքը: 2 գործով (ՀՀ քրեական օրենսգրքի 184-րդ

հոդված՝ 1 անձ) մեղադրողի կողմից բողոք չի բերվել, որոնցից մեկով արդարացման դատավճիռը կայացված է եղել մեղադրանքից հրաժարվելու արդյունքում:

Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ – 2021թ.-ի հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ իրավասու մարմինների վարույթում տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստվել է 452-ով ավել նյութ, քան 2020թ.-ին՝ (2021թ.(1834)-(2020թ.(1382)=452): Հարուցվել է 270-ով ավել քրեական գործ, քան 2020թ.-ին (2021թ.(1114)-2020թ.(844)=270): Տարվա ընթացքում վարույթում քննվել է 376-ով ավել քրեական գործ, քան 2020թ.-ին (2021թ.(1421)-2020թ.(1045)=376): Հաշվետու ժամանակաշրջանում 12-ով պակաս քրեական գործի վարույթ է կարճվել քան 2020թ.(2021թ.(255)-(2020թ.(267)=12): Դատարան է ուղարկվել 14-ով պակաս քրեական գործ և 2-ով պակաս անձի վերաբերյալ, քան 2020թ. (2021թ.(33 գործ՝ 47 անձ)-(2020թ.(47 գործ՝ 49 անձ) =14 գործ, 2 անձ):

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազության տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազները դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն են իրականացրել ՀՀ ՊԵԿ քննչական վարչության քննիչների և ՀՀ ՊԵԿ հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության հետաքննիչների կողմից նախապատրաստված նյութերի նկատմամբ: Նշված ժամանակահատվածում նախաքննության և հետաքննության մարմինների կողմից նախապատրաստվել և ավարտվել են ընդամենը 948 նյութ (2020թ.- 749):

2021թ. ընթացքում վարչության դատախազների կողմից 911 (2020թ.-707) քրեական գործի նկատմամբ իրականացվել է դատախազական հսկողություն և դատավարական ղեկավարում: Համեմատության համար նշենք, որ այդ թիվը 204 քրեական գործով ավել է նախորդ՝ 2020թ. իրականացրած հսկողական քրեական գործերի թվից:

2021թ. ընթացքում վարչության դատախազների կողմից հարուցվել են 5 (2020թ.-3) քրեական գործեր:

Որպես դրական ցուցանիշ Կոլեգիան արձանագրում է նախապատրաստված և ավարտված նյութերով, քննված և ավարտված քրեական գործերով, ինպես նաև դատարանում քննված ու ավարտված քրեական գործերով պետությանը պատճառված վնասի և դրա վերականգնման մասով կատարված աշխատանքները:

Այսպես, 2021թ. ընթացքում տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով թվով 205 (2020թ.- 175) նախապատրաստված և ավարտված նյութով, ու քննված և ավարտված քրեական գործով, ինպես նաև դատարանում քննված ու ավարտված քրեական գործերով պետությանը պատճառված վնասը կազմել է 22.294.527.129 (2020թ.-12.026.257.043) ՀՀ դրամ, որից վերականգնվել է 5.610.773.452 (2020թ.- 1.989.200.408) ՀՀ դրամը:

Դատարանում քննված և ավարտված քրեական գործերով պատճառված ընդհանուր վնասը կազմել է 125.912.905 ՀՀ դրամ: Պատճառված վնասից վերականգնվել է 56.063.288 դրամ (2020թ.- 7.643.000) :

Այսպես, 2021թ. ընթացքում քննվող քրեական գործերով դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն իրականացնող դատախազների կողմից քննիչներին տրվել է 38 գրավոր ցուցում (2020թ.- 19):

ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներին ու ՊԵԿ ՕՀ վարչությանը, քրեական գործերով ծագած անհրաժեշտություններով պայմանավորված տրվել են թվով 23 հանձնարարականներ (2020թ.-85):

ՀՀ ՊԵԿ քննչական վարչության պետին և քննիչներին՝ կոնկրետ քրեական գործերով, նրանց կողմից իրենց գործունեության ընթացքում թույլ տրված խախտումներն ու թերացումները վերացնելու, ինչպես նաև գործերով անհրաժեշտ քննչական և դատավարական գործողություններ կատարելու նպատակով ներկայացվել է 269 հաղորդում (2020թ.-7):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի կարգով ներկայացվել է 9 միջնորդագիր (2020թ.-0):

Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ - 2021 թվականի ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության իրավասությանը վերապահված հանցագործությունների 6356 դեպք, նախորդ տարվա 4910 դիմաց, որից 3102-ը կամ 48.8%-ը՝ Երևան քաղաքում, իսկ 3254-ը կամ 51.2%-ը՝ ՀՀ մարզերում:

Նախորդ տարվա համեմատությամբ հանցագործության դեպքերն աճել են 1446-ով կամ 29.5 %-ով, բացահայտումը կազմել է 69.3%, 2020թ.-ի 66.5%-ի դիմաց:

Աճել են ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու դեպքերը: Եթե 2020 թվականին արձանագրվել է 1360 դեպք, ապա 2021 թվականին՝ 1548 դեպք, դեպքերն աճել են 188-ով կամ 13.8%-ով: Բացահայտումը կազմել է 83,4%, նախորդ տարվա 82.1%-ի դիմաց:

Սրա հետ մեկտեղ, աճել են մահվան ելքով դեպքերը: Եթե 2020 թվականին արձանագրվել է մահվան 229 դեպք, ապա 2021 թվականին՝ 239 դեպք, դեպքերն աճել են 10-ով կամ 4.4%-ով: Բացահայտումը կազմել է 60.8%՝ նախորդ տարվա 57.1%-ի դիմաց:

2021 թվականի ընթացքում հաշվառվել է ընդհանուր 4604 ճանապարհատրանսպորտային պատահար, որի արդյունքում մահացել է 368 անձ, իսկ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ են ստացել 6699-ը: Ընդհանուր պատահարների թիվը 2021 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 588-ով կամ 13,9 %-ով, մահացած անձանց թիվը՝ 20-ով կամ 5,7%-ով, իսկ դրանց արդյունքում վնասվածքներ ստացած անձանց թիվը՝ 853-ով կամ 14,6%-ով:

Հաշվի առնելով, որ համեմատության ենթակա՝ 2020 թվականի ընթացքում ՀՀ-ում տևական ժամանակ գործել են անձանց տեղաշարժի սահմանափակումներ, ուստի առավել իրական պատկերացում կազմելու նպատակով 2021 թվականին արձանագրված դեպքերը համեմատվել են նաև 2019 թվականի դեպքերի հետ, որի արդյունքում պարզվել է, որ 2021 թվականի ընթացքում արձանագրված ճանապարհատրանսպորտային պատահարների քանակը 2019 թվականի համեմատությամբ նվազել են 195-ով:

Բացի ավանդական պատճառներից, այն է ճանապարհի սխալ կամ թերի կահավորում, լուսավորության բացակայություն, արագության գերազանցում և այլն, մեր կարծիքով ՃՏՊ-ների աճի պատճառ է հանդիսանում նաև վարորդական իրավունք ձեռք բերողների, այլ կերպ ասած սուբյեկտների, ինչպես նաև տրանսպորտային միջոցների քանակի շեշտակի ավելացումը: Միայն 2020-2021թթ. ընթացքում ՀՀ ՃՈ-ի կողմից տրամադրվել է շուրջ 300.000 հաշվառման վկայագիր և շուրջ 175.000 վարորդական իրավունքի վկայական: Նախկինում 50.000-ից ոչ ավելին:

ՃՏՊ-ները նախականխելու, դրանք ծնող պատճառները վերացնելու նպատակով հաշվետու տարում ինչպես տարածքային ստորաբաժանումներում, այնպես էլ՝ ՀՀ գլխավոր դատախազությունում իրականացվել են ուսումնասիրություններ և դրանց արդյունքում իրավասու մարմիններին ներկայացվեն են միջնորդագրեր, անց են կացվել խորհրդակցություններ, տրվել են հանձնարարականներ:

Էական աճ է արձանագրվել նաև անտառային ֆոնդի կամ դրանցից դուրս գտնվող տարածքներում ապօրինի ծառահատման դեպքերով:

Եթե 2020 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով հարուցվել է 369 քրեական գործ,ապա 2021 թվականին՝ 455 գործ, այսինքն՝ աճը կազմել է 86 դեպք կամ 23,3%:

Այս հանցատեսակի աճին նպաստել է նաև դրանց լատենտայնության նվազումը, որն էլ հետևանք է դրանց հայտնաբերման ուղղությամբ քրեական հետապնդման մարմինների դրսևորած որոշակի հետևողականության:

Այս դեպքերի վերաբերյալ նույնպես իրականացվել են ուսումնասիրություններ, շահագրգիռ մարմինների մասնակցությամբ ՀՀ գլխավոր դատախազությունում իրականացվել է խորհրդակցություն, և դրանց նախականխման ու հայտնաբերման ուղղությամբ միջոցառումներ ձեռնարկելու վերաբերյալ ինչպես ՀՀ գլխավոր դատախազության, այնպես էլ տարածքային ստորաբաժանումների կողմից ներկայացվել են միջնորդագրեր:

Զգալիորեն աճել են ապօրինի կերպով զենք, ռազմամթերք ձեռք բերելու, պահելու և ապօրինի շրջանառության դեպքերը: Եթե 2020 թվականին արձանագրվել է նման բնույթի 641 դեպք, ապա 2021 թվականի ընթացքում՝ 714 դեպք, այսինքն՝ դեպքերը աճել են 73-ով կամ 11.4%-ով: Բացահայտումը կազմել է 86%՝ նախորդ տարվա 82,9%-ի դիմաց:

Այս բնույթի հանցագործությունների դեպքերի աճին առերևույթ նպաստել է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմը, որի ընթացքում մի շարք անձանց կողմից ապօրինի կերպով ՀՀ է տեղափոխվել զենք-զինամթերք:

Աճել են նաև հասարակական անվտանգության դեմ ուղղված այլ հանցագործությունները, որը պայմանավորված է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ կասեցված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու կամ այդ անձի կողմից ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու դեպքերով: Միայն 2021 թվականի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածով արձանագրվել է 1732 դեպք, որոնցից 1720-ով հարուցվել է քրեական գործ: Նույն ժամանակահատվածում 1218 քրեական գործ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Քրեական ենթամշակույթին առնչվող հանցատեսակներով 2021 թվականի ընթացքում արձանագրվել է 14 դեպք՝ նախորդ տարվա 16-ի դիմաց:

Օրենքի ընդունումից ի վեր նշված հոդվածներով դատարան է ուղարկվել 6 քրեական գործ 30 անձի վերաբերյալ, որոնցից 4-ով ամբաստանվում են քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձ, այսպես կոչված օրենքով գողեր:

Հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով լիազորությունն իրականացնելու արդյունքում կայացվել է դատախազական 1311 ակտ՝ նախորդ տարվա 589-ի դիմաց, այդ թվում վերացվել է քրեական գործ հարուցելը մերժելու գործով վարույթը կարճելու և կասեցնելու մասին 372 որոշում, տրվել է 724 գրավոր ցուցում, ներկայացվել 215 միջնորդագիր ու հաղորդում:

Նույն ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազների կողմից կայացվել է դատախազական 72 ակտ /2020թ.՝ 35/, այդ թվում վերացվել է քրեական գործ հարուցելը մերժելու, գործով վարույթը կարճելու մասին 29 որոշում, տրվել է 33 ցուցում, ներկայացվել 10 միջնորդագիր ու հաղորդում:

Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ - 2021 թվականի ընթացքում արձանագրվել է բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործության 1592 դեպք, նախորդ տարվա 1272 դեպքի դիմաց: Դեպքերը աճել են 326-ով կամ 25,6 % -ով, և ինչպես միշտ գերակշիռ մասը կազմում են թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերը

Արձանագրվել է այս բնույթի հանցագործությունների 1544 դեպք, նախորդ տարվա 1226 դիմաց, դեպքերն ավելացել են 318-ով կամ 25,9%-ով: Բացահայտումը կազմել է 50%, նախորդ տարվա 51,2%-ի դիմաց:

Նույն ժամանակահատվածում արձանագրվել է թմրամիջոցների ապօրինի շրջանառության 974 դեպք, որից 529-ը՝ իրացման նպատակով, նախորդ տարվա 872-ի դիմաց /532-ը՝ իրացման նպատակով/: Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերն ավելացել են 102-ով կամ 11,7-ով: Այս դեպքերի բացահայտումը կազմել է 59%, որից իրացման նպատակով շրջանառության դեպքերինը՝ 37,3%: 2020թ. նշված հանցագործությունների բացահայտման ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 57,1% և 37%:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ վերջին տարիներին հատկապես մեծ ծավալներ են ստացել սոցիալական կայքերի, համացանցային հեռահաղորդակցության համակարգերի, առավելապես «Telegram»-ի օգտագործմամբ թմրամիջոցների ապօրինի իրացման դեպքերը, որոնց պարագայում, որպես կանոն, իրացման ենթակա թմրամիջոցը նախապես տեղադրվում է որևէ վայրում, դրա դիմաց վճարումը կատարվում է անկանխիկ (էլեկտրոնային դրամապանակներ, կրիպտոարժույթ, բանկային հաշվեհամարներ), որից հետո գնորդին փոխանցվում են ապօրինի շրջանառության առարկայի տեղադրման վայրերի վերաբերյալ տվյալները:

Կոլեգիան արձանագրում է, որ սոցիալական կայքերի օգտագործմամբ իրացման նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառության կանխման և խափանման առումով կարևոր նշանակություն կարող է ունենալ էլեկտրոնային հեռահաղորդակցության ոլորտում համարժեք կառուցակարգերի մշակումը և ներդրումը, որոնք հնարավորություն կտան սահմանափակել արգելված տեղեկատվության ոչ իրավաչափ տարածումը և նշված խնդիրները լուծելու նպատակով 2021 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազի կողմից 2 հաղորդում է հասցեագրվել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարին, դրանց հիման վրա նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ ՀՀ գլխավոր դատախազությունում տեղի է ունեցել քննարկում, որի ընթացքում համապատասխան պաշտոնատար անձինք մանրամասն իրազեկվել են առկա հիմնախնդիրների մասին և պատրաստակամություն են հայտնել սեղմ ժամկետում նախաձեռնել անհրաժեշտ միջոցներ:

Կատարված վերլուծությունները վկայում են, որ ՀՀ տարածքում արձանագրված թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեպքերով հայտնաբերված թմրամիջոցների ճնշող մեծամասնությունը օտարածին են,որպիսի հանգամանքը վկայում է այն մասին, որ նշված հանցատեսակի դեմ պայքարը պետք է արդյունավետ կազմակերպել հատկապես մաքսային սահմանում:

2021թ. ընթացքում արձանագրվել է թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մաքսանենգության 420 դեպք, նախորդ տարվա 222-ի դիմաց, դեպքերի թիվն աճել է 198-ով կամ 89,2%-ով: Բացահայտվել է մաքսանենգության դեպքերի 10,5%-ը, նախորդ տարվա 23.1%-ի դիմաց:

Կոլեգիան արձանագրում է, որ մաքսանենգության դեպքերի շուրջ 60% կազմում են օնկոլոգիական, հոգեկան կամ այլ հիվանդություններով տառապող անձանց կամ նրանց բարեկամների կողմից բուժման նպատակով հոգեմետ դեղերի ՀՀ տարածք տեղափոխելու կամ արտահանելու դեպքերը, որոնք պայմանականորեն կարող են համարվել բացահայտված

սակայն նյութերի նախապատրաստման 10 օրյա ժամկետում գործի ելքի համար նշանակություն ունեցող համապատասխան փաստաթղթերի կամ այլ տվյալների ստացված չլինելու պատճառով դրանք հարուցվել են և հաշվառվել որպես չբացահայտված:

Վերոհիշյալ ցուցանիշները վկայում են տվյալ հանցատեսակի դեմ մղվող պայքարի՝ օպերատիվ-հետախուզական գործունեության, հետաքննության և նախաքննության արդյունավետության բարձրացմանը միտված գործուն միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության մասին:

Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մաքսանենգության դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերի ուսումնասիրությունը վկայում է, որ տարեցտարի ավելի մեծ տարածում են ձեռք բերում հանցագործության առարկան միջազգային փոստային առաքումների միջոցով ՀՀ պետական սահմանով տեղափոխման դեպքերը:

Նշված առաքումներն իրականացնող կազմակերպությունների կողմից վերջին տարիներին լայնորեն կիրառվում են զանազան համացանցային հավելվածներ: Ընդ որում, չեն ձեռնարկվում բավարար միջոցներ հաճախորդների նույնականացումն ապահովելու համար: Մասնավորապես, մեծ տարածում ունեն այն դեպքերը, երբ նշված համացանցային ռեսուրսներում օգտահաշիվները գրանցվում են այլ անձանց կամ մտացածին տվյալներով, նշվում են պատահական կամ ՀՀ տարածքում չգործող հեռախոսահամարներ, որպես առաքման հասցեատեր նշվում են անձինք, ովքեր երբեմն տեղեկացված չեն լինում հանցավոր սխեմայի մանրամասնությունների, առաքանու իրական պատվիրատուների մասին :

Մաքսանենգության դեպքերի բացահայտման նման բացասական վիճակագրությունն ունի և օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ, թերևս օբյեկտիվ կարող է համարվել այն հանգամանքը, որ ՊԵԿ քննչական դեպարտամենտի համապատասխան բաժինը, որտեղ կենտրոնացված են այս գործերի ճնշող մեծամասնությունը, աշխատել է գեր ծանրաբեռնված, բացի այդ, տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմի որոշ գործողություններ կատարվում են ՀՀ սահմաններից դուրս և քրեական հետապնդման մարմինները զրկված են արագ և նպատակային գործողություններ ձեռնարկելու հնարավորությունից, իսկ միջազգային համագործակցության շրջանակներում ներկայացվող քննչական պահանջները երբեմն մնում են անպատասխան, իսկ ստացված արդյունքները ժամանակավրեպ:

Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով լիազորությունն իրականացնելու արդյունքում կայացվել է դատախազական 338 ակտ՝ նախորդ տարվա 246-ի դիմաց, այդ թվում վերացվել է քրեական գործ հարուցելը մերժելու գործով վարույթը կարճելու և կասեցնելու մասին 65 որոշում, տրվել է 258 ցուցում, ներկայացվել 15 միջնորդագիր ու հաղորդում:

Նույն ժամանակահատվածում ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան վարչության դատախազների կողմից կայացվել է դատախազական 86 ակտ /2020թ.՝ 16/, այդ թվում վերացվել է քրեական գործ հարուցելը մերժելու, գործով վարույթը կարճելու մասին 4 որոշում, տրվել է 33 ցուցում, ներկայացվել 4 միջնորդագիր ու հաղորդում:

<u>Կոռուպցիոն բնույթի հանցագործություններ -</u> 2021թ. ընթացքում ՀՀ իրավասու մարմինների վարույթում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ նախապատրաստվել է 1409 նյութ (2020թ.- 1810 նյութ), որից 798-ով (2020թ.- 1232) հարուցվել են քրեական գործեր, 566-ով՝ (2020թ.- 561) քրեական գործ հարուցելը մերժվել է, իսկ 45 նյութ (2020թ.- 17) ուղարկվել ըստ ենթակայության:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված 2318 (2020թ.- 2535) քրեական գործից ընդամենն ավարտվել է 730 (2020թ.-716) գործի վարույթ, որից 543-ը (2020թ.- 533) կարճվել է: Վարույթն ավարտված մյուս 187 քրեական

գործերը՝ 433 անձի վերաբերյալ (2020թ.- 183-ը՝ 410 անձի վերաբերյալ), մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան:

Նշված ժամանակահատվածում վարույթում գտնվող 2312 (2020թ.- 2535) քրեական գործերից 255-ի (2020թ.- 156) վարույթը կասեցվել է:

2020 և 2021 թվականների վիճակագրական տվյալների համադրված վերլուծությունը վկայում է հաշվետու ժամանակաշրջանում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների նվազման մասին: Այս համատեքստում պետք է նշել, որ 2018 թվականից մինչև 2020 թվականը կտրուկ աճել է կոռուպցիոն հանցագործությունների դեպքերի քանակը: Եթե 2017 թվականին նախապատրաստվել է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ 767 նյութ (հարուցվել է 591), ապա հաջորդող տարիներին դրանց թիվը կտրուկ աճել է՝ նախ կազմելով՝ 2018 թվականին՝ 1988 նյութ (հարուցվել է 1469 քրեական գործ), 2019 թվականին՝ 2083 նյութ (հարուցվել է 1399 քրեական գործ): 2020 թվականին որոշ չափով նվազել է՝ կազմելով 1810 նյութ (հարուցվել է 1232 քրեական գործ), իսկ 2021 թվականին՝ 1409 նյութ (հարուցվել է 798 քրեական գործ): 2018-2021 թվականների՝ վերը նշված ցուցանիշների ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ 2018 թվականին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած իրադարձությունների արդյունքում ինչպես տվյալ, այնպես էլ 2019 թվականին գրանցվել է կոռուպցիոն հանցագործությունների դեպքերի կտրուկ աճ, ինչը պայմանավորված է եղել նաև այն հանգամանքով, որ մինչև 2018 թվականը կատարված հանցագործությունների վերաբերյալ հաղորդումներ առավելապես ստացվել են հենց 2018 և 2019 թվականների ընթացքում: Հետագայում թեև ստացվել են մինչ այդ տեղի ունեցած հանցագործությունների վերաբերյալ տվյալներ, սակայն բնական է՝ այդպիսիք տարեցտարի նվազել են: Նշվածի մասին են վկայում նաև վերը նշված ցուցանիշները, որոնց համաձայն՝ 2020 թվականին արձանագրվել է կոռուպցիոն հանցագործությունների առավել ցածր ցուցանիշ, քան 2019 թվականին, իսկ 2021 թվականին՝ առավել ցածր ցուցանիշ, քան 2020 թվականին:

Բացի այդ, ինչպես նախորդող ժամանակաշրջանում, այնպես էլ 2020 և 2021 թվականի ընթացքում իրավապահ մարմինների կողմից տարված առավել ակտիվ աշխատանքներն արդեն իսկ տվել են դրական արդյունք նշված հանցատեսակների նվազման առումով: Թեև կոռուպցիոն բնույթի հանցագործությունները կրում են լատենտային՝ քողարկված բնույթ, սակայն դրանց նվազումը ներկայումս մեծապես պայմանավորված է ոչ թե վերջին հանգամանքով, այլ իրավապահ մարմինների ակտիվ և համատեղ աշխատանքով: Հարկ է արձանագրել նաև, որ թե՛ 2020, թե՛ 2021 թվականին ՀՀ դատախազության կողմից ձեռնարկվել են բազմաթիվ միջոցներ, որոնք ևս դրական առումով էականորեն ազդել են հիշյալ ցուցանիշների վրա:

2021 թվականի ընթացքում կոռուպցիոն բնույթի ավարտված նյութերով և ավարտված քրեական գործերով պատճառված ընդհանուր գույքային վնասի չափը կազմել է 4.548.233.348 ՀՀ դրամ (2020թ.՝ 6.331.155.757 ՀՀ դրամ):

Ընդ որում՝ վերը նշված ընդհանուր վնասից 4.417.939.348 ՀՀ դրամը պատճառվել է պետությանը (2020թ.՝ 5.802.738.606), 124.657.263 ՀՀ դրամը՝ համայնքներին (2020թ.՝ 362.605.169), իսկ 5.636.737 ՀՀ դրամը՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց (2020թ.՝ 165.811.982):

Բացի այդ, 2021թ. ընթացքում կոռուպցիոն բնույթի ավարտված նյութերով և ավարտված քրեական գործերով պատճառված ընդհանուր գույքային վնասից վերականգնվել է 400.051.030 ՀՀ դրամ (2020թ.՝ 4.518.295.697 ՀՀ դրամ), այսինքն՝ 4.118.244.667 ՀՀ դրամով պակաս, քան 2020թ. արձանագրված՝ նույն ժամանակահատվածում կոռուպցիոն բնույթի ավարտված նյութերով և ավարտված քրեական գործերով պատճառված գույքային վնասից վերականգնված չափը:

2021թ. ընթացքում ՀՀ դատարաններում քննվել և ավարտվել են կոռուպցիոն բնույթի 83 (2020թ.-104) քրեական գործ՝ 150 (2020թ.-152) անձի վերաբերյալ:

Դատարանում քննված և ավարտված քրեական գործերով պատճառված ընդհանուր վնասը կազմել է 551.044.294 ՀՀ դրամ (2020թ.-1.548.030.727 ՀՀ դրամ), որից վերականգնվել է 43.712.747 ՀՀ դրամը (2020թ.-110.284.904 ՀՀ դրամ):

Պետական շահերի պաշտպանության ոլորտ - Հաշվետու ժամանակահատվածում հանրապետության դատախազության բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների, ներառյալ՝ վարչության կողմից կատարվել է 885 ուսումնասիրություն /2020թ.՝ 534 ուսումնասիրություն/, հայտնաբերվել է 379 իրավախախտում /2020թ.՝ 593 իրավախախտում/, պետության շահերին հասցրած վնասը կամովին վերականգնելու մասին նախազգուշացվել է 12 անձ /2020թ.՝ 54 նախազգուշացում/, կամովին պետական բյուջե է վերականգնվել է 5 մլն. 207 հազ. դրամ /2020թ.՝ վերականգնվել է 212 մլն. 131 հազ. դրամ/, ուսումնասիրության արդյունքներով ներկայացվել է 29 հաղորդում և միջնորդագիր /2020թ.՝ 33 հաղորդում/:

2021թ. ընթացքում դատախազության մարմինները, ներառյալ՝ վարչությունը, դատարան են հարուցել 74 հայց՝ ընդհանուր 624 մլն. 461 հազ. դրամի բռնագանձման պահանջով /2020թ. ընթացքում դատարան է ներկայացվել 48 հայց՝ 569 մլն. 015 հազ. դրամի բռնագանձման պահանջով/:

Դատարաններում քննվել է 44 հայց, որոնցից բավարարվել է 264 մլն. 855 հազ. դրամ հայցապահանջով 39 հայց (այդ թվում նախախորդ տարիներին հարուցված), ընթացքում է գտնվում 7 մլրդ. 171 մլն. 048 հազ. դրամ հայցապահանջով 117 հայց:

Նախորդ նույն ժամանակաշրջանում դատարաններում քննվել է է 44 հայց, որոնցից բավարարվել է 4 մլրդ. 684 մլն. 653 հազ. դրամ հայցապահանջով 33 հայց (այդ թվում նախախորդ տարիներին հարուցված):

Հաշվետու ժամանակահատվածում հանրապետության դատախազության բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների, ներառյալ՝ վարչության կողմից հարուցվել է 99 քրեական գործ /2020թ՝ հարուցվել է 161 քրեական գործ/, 115 դեպքերով ուսումնասիրությունների արդյունքները ուղարկվել են ըստ ենթակայության նյութեր նախապատրաստելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և ՀՀ մարզերի դատախազությունների, ներառյալ՝ վարչության կողմից պետական շահերի պաշտպանության հարցադրումներով ձեռնարկված միջոցառումներով՝ հարուցված հայցերով, հարուցված քրեական գործերով և քննչական մարմիններ ուղարկված նյութերով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է 30 մլրդ. 075 մլն. 532 հազ. դրամ, որից 29 մլրդ. 195 մլն. 311 հազ. դրամը վարչության կողմից:

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ - 2021 թվականի ընթացքում ՀՀ դատախազության դատախազների կողմից /ներառյալ՝ ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազների կողմից/ հաշվետու ժամանակաշրջանում կատարվել է 1189 ստուգում և ուսումնասիրություն, որոնց արդյունքում հայտնաբերվել է 153 խախտում: Պատկան մարմիններին ուղարկվել է 16 հաղորդում: Ներկայացվել է 34 միջնորդագիր, որոնց հիման վրա վերանայվել է օրինականությանը հակասող 14 ակտ, կասեցվել է օրենսդրությանը հակասող 21 ակտ /2020թ.՝ 17/:

ՀՀ դատախազության դատախազների կողմից 2021 թվականի ընթացքում ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությունում կատարվել է 37 ստուգում և ուսումնասիրություն, որի

արդյունքում հայտնաբերվել է 11 խախտում, պատկան մարմիններին ուղարկվել է 4 հաղորդում, ներկայացվել է 2 միջնորդագիր:

Վարչության կողմից ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում իրականացված ստուգումների արդյունքում արձանագրվել են մի շարք խախտումներ՝ պահվող անձանց օրենքով սահմանված հիմնական իրավունքների, առողջության պահպանման, այդ թվում բավարար սնունդ, բժշկական օգնություն ստանալու, արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու հետ կապված:

Հայտնաբերված խախտումների տվյալներով 2022 թվականի փետրվարի 19-ին ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 308-րդ հոդվածի 2-րդ մասով, 314-րդ հոդվածի 1-ին մասով, 179-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 58151422 քրեական գործը, որը նախաքննություն կատարելու համար ուղարկվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե:

Արձանագրված խախտումների ծնող պատճառները պարզելու, տեղ գտած թերությունները հետագայում բացառելու վերաբերյալ հաղորդում է ուղարկվել նաև ՀՀ արդարադատության նախարարին:

Վարչության կողմից ՀՀ ԱՆ քրեակատարողական բաց ուղղիչ հիմնարկներում պահվող անձանց իրավունքների իրացման վիճակի ուսումնասիրության շրջանակներում ստուգվել է նաև նման հիմնարկներում պատիժ կրող և ուղղիչ հիմնարկի սահմաններից դուրս այլ գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող դատապարտյալների կողմից աշխատանքի անցնելու, ընդհատումների և աշխատանքից ազատվելու հանգամանքները, ինչի արդյունքում հայտնաբերվել են մի շարք խախտումներ:

Մասնավորապես, արձանագրվել է դեպք,երբ դատապարտյալը պայմանագիր է կնքել գործատուի հետ որպես վարորդ աշխատելու համար, մինչդեռ ստուգմամբ պարզվել է, որ դատապարտյալը վարորդական իրավունքի վկայական չի ունեցել, կամ դատապարտյալը պայմանագիր է կնքել գործատուի հետ, սակայն Վարչության կողմից աշխատավայր այցելությամբ կատարված ստուգմամբ պարզվել է, որ դատապարտյալը աշխատաժամին աշխատավայրում չի գտնվել:

Բաց ուղղիչ հիմնարկներում պատիժ կրող և ուղղիչ հիմնարկի սահմաններից դուրս այլ գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող դատապարտյալների կողմից աշխատանքի հաճախելու, ինչպես նաև վերջիններիս կողմից աշխատանքի ընթացքում դրսևորվող վարքագծի նկատմամբ անհրաժեշտ հսկողություն իրականացնելու նպատակով հաղորդում է ուղարկվել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետին, ինչպես նաև ոլորտը կարգավորող իրավական ակտերում անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ կատարելու վերաբերյալ ներկայացվել են օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ:

Վարչության կողմից նախաձեռնված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ՀՀ որևէ քրեակատարողական հիմնարկ ներկայումս փաստացի ապահովված չէ բջջային կապի հաճախականության ռադիոալիքների խլացումը ապահովող սարքերով, ինչը նպաստում է ՔԿՀ-ում պահվող անձանց կողմից արգելված իր հանդիսացող բջջային հեռախոսներ ձեռք բերելուն, ուստի ՀՀ գլխավոր դատախազի կողմից ՀՀ արդարադատության նախարարին ուղարկվել է համապատասխան հաղորդում:

Հաշվետու ժամանակաշրջանում տարբեր պատճառներով քրեակատարողական հիմնարկներում մահացել է 13 պահվող անձ, որից 2-ը՝ ինքնասպանության, 2-ը՝ հանկարծամահության, 3-ը՝ COVID-19 համավարակի, 1-ը՝ սպանության, 5-ը՝ այլ հիվանդության պատճառով:

2021 թվականի ընթացքում Վարչության կողմից ներկայացվել է ոլորտին վերաբերող օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում օրենսդրական փոփոխություններ կատարելու 10 նախագիծ:

2022 թվականի հունվարի 01-ի դրությամբ կալանավորված անձանց և դատապարտյալների ընդհանուր թիվը կազմել է 2128, որոնցից 1217-ը՝ կալանավորված անձ, 911 դատապարտյալ:

Միջազգային-իրավական համագործակցության ոլորտ - 2021 թվականի ընթացքում ծավալուն աշխատանք է կատարվել այլ պետությունների դատախազությունների և դատախազական տարածաշրջանային և միջազգային կառույցների հետ հարաբերությունների զարգացման և դրանցից բխող պարտավորությունների կատարման ուղղությամբ: Հաշվետու ժամանակահատվածում այլ պետությունների դատախազություններ ուղարկվել է քրեական գործերով իրավական օգնություն ցույց տալու մասին 640 միջնորդություն, ստացվել 224-ը: Հաշվետու ժամանակաշրջանում վարչությունն իրականացրել է Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից հետախուզվող և օտարերկրյա պետություններում հայտնաբերված անձանց հանձնելու մասին 43 միջնորդությունների նախապատրաստումը: Ներկայացված 43 հանձնման միջնորդություններից 14-ը բավարարվել են, 7-ը մերժվել, 2-ը թողնվել են առանց քննարկման, 20-ը գտնվում են քննարկման փուլում: Բավարարվել են նաև նախկինում ներկայացված միջնորդություններից 7-ը: Օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացված 22 միջնորդություններից բավարարվել է 8-ը, մերժվել՝ 4-ը, իսկ 10-ը գտնվում են քննարկման փուլում:

Բավարարվել է նաև նախորդ հաշվետու ժամանակաշրջանից փոխանցված 5 միջնորդություն:

2021թ. զգալիորեն աճել է ՀՀ-ում հայտնաբերված այլ երկրների կողմից հետախուզվողների թիվը՝ կազմելով 186 նախորդ տարվա 141-ի դիմաց: Վարչության դատախազները դատարան են ներկայացրել միջնորդություններ օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ-ում հայտնաբերված անձանց նկատմամբ ժամանակավոր, հանձնման համար կալանավորում կիրառելու, ինչպես նաև կալանավորման ժամկետները երկարացնելու մասին և մասնակցել դրանց քննության դատական նիստերին: Վարչության դատախազները մասնակցել են նաև հանձնումը թույլատրելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի որոշումների դեմ բերված բողոքներով կայացած դատական նիստերին:

Վարչության միջոցով այլ պետությունների իրավասու մարմիններ է ուղարկվել 2 քրեական գործ, իսկ այլ պետության տարածքում կատարված հանցագործության համար քրեական հետապնդում իրականացնելու միջնորդությամբ օտարերկրյա պետությունների իրավասու մարմիններից ստացվել է 16 քրեական գործ:

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը շարունակել է զարգացնել համագործակցությունը Եվրոպայի Խորհրդի, ՄԱԿ-ի, ԵՄ-ի, ԵԱՀԿ-ի համապատասխան ներկայացուցիչների, ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի քարտուղարության, Դատախազների միջազգային ասոցիացիայի, Եվրոպայի դատախազների խորհրդատվական խորհրդի ու Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչությունների հետ:

ԱՊՀ մասնակից-պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն Խորհրդի հետ համագործակցության ընթացքում խորհրդի քարտուղարությունից վարչությունում ստացվել է 97 (նախորդ տարի 51) փաստաթուղթ, որոնք ուսումնասիրվել են, ներկայացվել են կարծիքներ և առաջարկություններ, տեղեկանքներ, կազմվել են տեղեկատվական նամակներ և ուղարկվել դատախազության այլ ստորաբաժանումներ:

2021թ. վարչությունը կազմակերպել է ՌԴ, Իտալիայի, Իրանի Իսլամական Հանրապետության, Լիտվայի գլխավոր դատախազների, Իրանի Իսլամական Հանրապետության արդարադատության նախարարի, միջազգային կազմակերպությունների մի շարք ներկայացուցիչների, ՀՀ-ում տարբեր պետությունների դեսպանների հետ ՀՀ գլխավոր դատախազի և գլխավոր դատախազի տեղակալի հանդիպումները, այդ թվում՝ ՌԴ գլխավոր դատախազի հետ 5 հանդիպումները, ՌԴ գլխավոր դատախազի և Իրանի Գլխավոր դատախազի այցը ՀՀ: Ահռելի աշխատանք է կատարվել դրանց շրջանակներում քննարկման ենթակա հարցերի մշակման և նախապատրաստման համար, որոնց շրջանակներում ստորագրվել են նաև համագործակցության վերաբերյալ երկկողմ և բազմակողմ փաստաթղթեր, ապահովվել է հանդիպումներում ձեռք բերված պայմանավորվածությունների անշեղ կատարումը:

2021թ. վարչությունն ապահովել է ՀՀ դատախազության մասնակցությունը ԱՊՀ կոռուպցիայի հակազդման միջպետական խորհրդի 6-րդ, ԱՊՀ անդամ երկրների գլխավոր դատախազների համակարգող խորհրդի հերթական՝ 31-րդ նիստերին, Կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիայի անդամ երկրների համաժողովի 9-րդ նստաշրջանին, Եվրոպական երկրների դատախազությունների ղեկավարների համաժողովին:

2021 թվականի ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության կողմից շարունակվել է դեռևս 2017 թվականից սկսած օտարերկրյա գործընկերների հետ արդյունավետ համագործակցությունը քաղաքական և ազգային պատկանելիության շարժառիթներով Ադրբեջանի իրավասու մարմինների կողմից անձանց նկատմամբ անհիմն հետախուզում հայտարարելու համար նախաձեռնված հարցումները ձախողելու ուղղությամբ:

Մասնավորապես՝ ինչպես Արցախ այցելած, այնպես էլ այնտեղ գործունեություն ծավալող անձանց, Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության ներկայացուցիչների ու ՀՀ գործող և նախկին որոշ պաշտոնատար անձանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով Ադրբեջանի կողմից միջազգային հետախուզում հայտարարելու փորձերի կապակցությամբ ձեռնարկված քայլերի արդյունքում Ինտերպոլի գլխավոր քարտուղարության կողմից ձևավորվել է դիրքորոշում՝ այդ գործերով հարցումները Ինտերպոլի կանոնադրության 3-րդ հոդվածին չհամապատասխանող համարելու վերաբերյալ, արդյունքում ադրբեջանական կողմից ստացված նմանատիպ հարցումներին Ինտերպոլի գլխավոր քարտուղարության կողմից ընթացք չի տրվում:

Բացի այդ, ՀՀ գլխավոր դատախազությունը հետևողականություն է դրսևորում նաև նույն շարժառիթով ԱՊՀ հետախուզական ուղիները օգտագործելու Ադրբեջանի փորձերը ձախողելու ուղղությամբ:

ՀՀ գլխավոր դատախազը, անդրադառնալով հանցավորության վիճակին, մտահոգություն հայտնեց, մասնավորապես, սպանությունների և սպանության փորձերի դեպքերի աճի կապակցությամբ՝ նշելով, որ նշված դեպքերի աճը հանցավորության ընդհանուր տվյալներում առկա ամենամեծ ահազանգն է: Այս կապակցությամբ հանձնարարվեց դատախազական հսկողության գործիքակազմի կիրառմամբ ուշադրություն դարձնել հատկապես օպերատիվ-հետախուզական միջոցառումների միջոցով կանխարգելիչ գործողությունների ձեռնարկմանը, նախկինում կատարված հանցագործության դեպքերի հնարավոր շարունակության դրսևորումների բացահայտմանը: Մասնավորապես, Ա.Դավթյանը շեշտեց, որ նշված դեպքերի զգալի մասում ներգրավված են որոշակի հանցավոր շրջանակներ, քրեական ենթամշակույթ կրող խմբավորումներ, հետևաբար անհրաժեշտ է հատկապես նման խմբավորումներում ներգրավված անձանց պահել ամենօրյա հսկողության ներքո, ընդ որում վերջիններիս ևս զգացնել տալով, որ իրենք ուժեղացված հսկողության ներքո են գտնվում: Այս կապակցությամբ Ա. Դավթյանը հանձնարարեց քրեադատավարական և օպերատիվ-

հետախուզական ամբողջ գործիքակազմի կիրառմամբ իրականացնել նախականխիչ գործողություններ, իսկ մարդու դեմ ուղղված հանցագործությունների դեպքերով գործերի քննության ընթացքում քրեական ենթամշակույթի կամ հանցավոր համագործակցության առերևույթ հատկանիշներ հայտնաբերելիս հարուցել քրեական գործեր:

Ա. Դավթյանը մտահոգություն հայտնեց նաև 2021թ. արձանագրված ճանապարհատրանսպորտային պատահարների թվի աճով: Շեշտելով այս կապակցությամբ նախկինում տրված հանձնարարականների խստիվ պահպանման անհրաժեշտությունը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից հանձնարարվեց հատուկ ուշադրություն դարձնել, նաև գիտության համապատասխան ոլորտի մասնագետների ներգրավմամբ, ավտոճանապարհների կոնկրետ հատվածներում երթևեկության ճիշտ կազմակերպման և այդ նպատակով ճանապարհատրանսպորտային համապատասխան նշաններով կահավորվածության խնդրին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույնիսկ ճանապարհատրանսպորտային նշաններով ամբողջապես հագեցված հատվածներում ճանապարհատրանսպորտային պատահարների հաճախակիությունը վկայում է երթևեկության ոչ ճիշտ կազմակերպման մասին:

ՀՀ գլխավոր դատախազը, անդրադառնալով պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության դատախազական գործառույթի իրականացման արդյունավետությանը, կարևորեց ոչ միայն արդեն իսկ կայացված ակտերի օրինականության ստուգումը, այլ նաև նախաձեռնողականության ցուցաբերումը՝ ուղղված ազատությունից զրկված անձանց անձնական գործերի շարունակական ուսումնասիրության արդյունքում վերջինների՝ պատիժը կրելու ռեժիմի փոփոխության, պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատվելու, տույժի կամ խրախուսանքի միջոցներ կիրառելու հիմքերի առկայության պարզմանը և համապատասխան միջնորդությունների ներկայացմանը:

Անդրադառնալով ապօրինի գույքի բռնագանձման ոլորտին՝ Ա. Դավթյանը կարևորեց ապօրինի գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազի և այն քրեական գործով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի հետադարձ կապը, որով առերևույթ ապօրինի գույքի առկայության վերաբերյալ տվյալներ են հայտնվել: Ա. Դավթյանը նշեց, որ բոլոր նմանատիպ դեպքերում պետք է ապահովվի տեղեկատվության փոխանակում տվյալ քրեական գործով նախաքննության ընթացքի, հնարավոր նոր գույքերի տվյալների և ապօրինի գույքի բռնագանձման գործընթացի համար կարևորություն ներկայացնող այլ տվյալների վերաբերյալ:

Գոհունակություն հայտնելով 2021թ. ընթացքում առանց բացառության դատախազական բոլոր ակտերի քանակական աննախադեպ աճի կապակցությամբ՝ Ա. Դավթյանը նշեց, որ բոլոր այն դեպքերում, երբ դատախազական ակտերը շրջադարձային նշանակություն են ունենում քրեական գործով վարույթի ընթացքի համար, ապա դրանք վկայում են տվյալ գործով գործուն դատախազական հսկողության և հետևողականության մասին: Ա. Դավթյանը նշեց, որ դատախազը հանդիսանում է քրեական գործով վարույթի «տերը», հետևաբար պատասխանատվություն է կրում քրեական գործով վարույթի բնականոն ընթացքի ապահովման, քրեական գործով բազմակողմանիության, լրիվության և օբյեկտիվության, պատժի անխուսափելիության ապահովման համար: Ա. Դավթյանը շեշտեց, որ արմատապես փոխվել է նաև դատախազական ակտերի նկատմամբ նախաքննական մարմիններում եղած ոչ գործընկերային վերաբերմունքը, և դատախազական ակտերը՝ մասնավորապես ցուցումները, նախաքննական մարմնի համար ղեկավար և ուղղորդող նշանակություն ունեն վարույթի ընթացքի տեսանկյունից: Ա. Դավթյանն ընդգծեց նաև ծառայողական քննություն անցկացնելու միջնորդությունների և քրեական գործով վարույթից քննիչին հեռացնելու որոշումների

կարևորությունը՝ նշելով, որ անհրաժեշտ է խստիվ բացառել անձնական դրդապատճառներով պայմանավորված ակտերի կայացումը: Ա. Դավթյանը հատկապես շեշտեց այն հանգամանքը, որ ելնելով ողջամիտ ժամկետներում գործի քննությունն ավարտելու և անհարկի ձգձգումներ թույլ չտալու պահանջից՝ քրեական դատավարությանը մասնակցելուց քննիչին հեռացնելու որոշման կայացումը պետք է սահմանափակվի բացառապես այն դեպքերով, երբ կասկածի տակ է դրվում վարույթն իրականացնող քննիչի օբյեկտիվությունը և անաչառությունը:

Ա. Դավթյանը արձանագրեց նաև այն փաստը, որ ՀՀ գլխավոր դատախազության որոշ ստորաբաժանումներում և ՀՀ դատախազության որոշ տարածքային ստորաբաժանումներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի կարգով ներկայացված միջնորդագրերի քանակը նախորդ հաշվետու ժամանակահատվածի համեմատ էական տարբերության չի ենթարկվել: Ընդգծելով միջնորդագրերի՝ որպես դատախազական գործունեության ամենաարդյունավետ ակտի կարևորությունը, Ա. Դավթյանը շեշտեց, որ բոլոր այն դեպքերում, երբ քրեական գործով վարույթի ընթացքում ձեռք են բերվում տվյալներ պաշտոնատար անձանց թերացումների և բացթողումները, թերի կարգավորումների, ամենաթողության և նմանատիպ այլ երևույթների մասին, դատախազության առաքելությունը չպետք է սահմանափակվի միայն քրեական գործով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողությամբ և մեղադրանքի պաշտպանությամբ, այլ պետք է վերհանվեն հանցագործության կատարմանը նպաստող հիշյալ պայմաններն ու պատճառները, որի արդյունքում ներկայացվի պատճառաբանված և թիրախային միջնորդագրեր պատկան մարմիններին: Այս կապակցությամբ Ա. Դավթյանն իր խոսքում առանձնացրեց հատկապես հաշվետու ժամանակահատվածում դատախազության միջնորդագրերի արդյունքում արձանագրված դրական միտումները՝ մասնավորապես Երևան քաղաքում գերեզմանատեղերի բաշխման գործընթացում, ապօրինի անտառահատումների ոլորտում և ՀՀ ոստիկանությունում վարչական իրավախախտումների հաշվառման քարտերի հետ կապված փոփոխությունները:

ՀՀ գլխավոր դատախազն անդրադարձավ նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի կիրառման պրակտիկային: Կարևորելով մարդասիրական մոտեցման պահպանման անհրաժեշտությունը՝ Ա. Դավթյանը շեշտեց հատկապես ՀՀ դատախազության բոլոր ստորաբաժանումներում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի կիրառման միասնականության ապահովումը՝ համապատասխան հանձնարարականներ տալով ՀՀ դատախազության վերահսկողական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումներին:

Ա. Դավթյանը կարևորեց նաև աշխատանքային կարգապահության խստիվ պահպանման անհրաժեշտությունը: Հանձնարարելով ՀՀ դատախազության բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին ամենօրյա հետևողականություն ցուցաբերել դատախազների կողմից աշխատանքային կարգապահության պահպանման, մասնավորապես՝ դատական նիստերից անհարկի բացակայության դեպքերը բացառելու ուղղությամբ, Ա. Դավթյանը նշեց, որ օբյեկտիվ պատճառներով պայմանավորված բացակայությունների դեպքում անհրաժեշտ է այդ մասին նախապես գրություն հասցեագրել դատարանին՝ դրանում նշելով դատական նիստից բացակայության պատճառները:

Ա. Դավթյանն անդրադարձավ նաև դատական նիստերի ընթացքում դատախազների գործելակերպին: ՀՀ գլխավոր դատախազը կարևորեց բոլոր, հատկապես հանրային հնչեղություն ունեցող, զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանվող դատական գործերով մեղադրողների համարձակ, նախաձեռնող, գիտելիքահեն, հստակ և գրագետ խոսքով կեցվածքը, ինչը հստակ ազդակ պետք է հանդիսանա հանրության համար, որ

անձեռնմխելի անձինք չկան և հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է քրեական պատասխանատվության:

Կոլեգիայի նիստում Ա. Դավթյանը դատախազության ստորաբաժանումների առջև խնդիր դրեց նաև էականորեն ակտիվացնել շփումները քաղաքացիների, դատավարության մասնակիցների հետ՝ առաջին հերթին դատախազների մոտ ընդունելությունների կազմակերպման հաճախակիացման միջոցով: Ա. Դավթյանը նշեց, որ դա ոչ միայն հանրության հետ հաղորդակցության միջոցով համակարգի նկատմամբ վստահության բարձրացման նպատակ է հետապնդում, այլ նաև դատախազներին օգնում է կոնկրետ իրավիճակներում ստանալ հավելյալ տեղեկատվություն, որոշակի իրողությունների, հանգամանքների վերաբերյալ դատախազների մոտ ձևավորել օբյեկտիվ պատկերացումներ և ներքին համոզմունք կարևոր դատավարական որոշումներ կայացնելուց առաջ:

Ելնելով վերոգրյալից՝

ԿՈԼԵԳԻԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներին՝

Դատախազներին խրախուսման ներկայացնելու յուրաքանչյուր դեպքում պարտադիր նշել տվյալ դատախազի կողմից ներկայացված միջնորդագրերի և դրա արդյունքում պատկան մարմինների կողմից ձեռնարկված որոշակի դրական փոփոխությունների հանգեցրած գործողությունների, ինչպես նաև տվյալ դատախազի կողմից կայացված և քրեական գործերով վարույթի համար շրջադարձային նշանակություն ունեցած դատախազական ակտերի վերաբերյալ համառոտ տեղեկատվություն:

2. ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին՝

1) Սպանության, սպանության փորձի դեպքերի կապակցությամբ առանձնացնել այն դեպքերը, երբ հարուցված քրեական գործերի քննության շրջանակներում պարզվել է, որ որպես հանցագործության շարժառիթ է հանդիսացել նախկինում միմյանց հետ ունեցած թշնամական հարաբերությունները կամ հանցավոր որոշակի խմբերի միջև առկա լարվածությունը: Նշված բոլոր դեպքերով քննարկել իրավասու մարմինների կողմից անգործություն դրսևորելու հանգամանքը, նման դեպքեր բացահայտելու պարագայում՝ քրեական վարույթ նախաձեռնելու հիմքերի բացակայության դեպքում, համապատասխան պաշտոնատար անձանց նկատմամբ ծառայողական քննություն անցկացնելու միջնորդությամբ դիմել իրավասու մարմիններին: Մասնավորապես, նախկինում դատապարտված, հաշվառման վերցված անձանց կողմից նշված բնույթի հանցանք կատարելու դեպքում այդ անձանց վարքագծի նկատմամբ հսկողություն իրականացնող պատկան մարմինների պաշտոնատար անձանց նկատմամբ բոլոր դեպքերում նախաձեռնել ծառայողական քննություն:

2) Սպանության, սպանության փորձի դեպքերի կապակցությամբ քննվող քրեական գործերի շրջանակներում հանցավոր կայուն խմբերի առկայության վերաբերյալ տվյալներ ձեռք բերելիս պարտադիր քննության առարկա դարձնել ՀՀ քրեական օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշների առկայության հարցը, նման հատկանիշներ հայտնաբերելու դեպքում անհապաղ հարուցել քրեական գործ:

3. Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին՝

1) Ցուցաբերել ամենօրյա մշտական հետևողականություն ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ, 34-104-րդ, 112-րդ, 175-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների կատարման համար նախկինում դատապարտված և ազատության մեջ գտնվող անձանց, ինչպես նաև հանցավոր ենթամշակույթ կրող խմբավորումների անդամ հանդիսացող անձանց ՀՀ ոստիկանության ամենօրյա օպերատիվ հսկողության ներքո պահելու ուղղությամբ.

2) Ճանապարհատրանսպորտային հանցագործությունների կրկնվող վայրերի հաշվառմամբ առանձնացնել բոլոր այն դեպքերը, որոնցով դեպքերի վայրերը թեև ամբողջությամբ կահավորված են եղել ճանապարհատրանսպորտային համապատասխան նշաններով և լուսավորվածությամբ, սակայն բազմակի /3 և ավելի/ դեպք է արձանագրվել: Նշված բոլոր դեպքերով ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության ներկայացուցիչների և մասնագիտական ոլորտի ներկայացուցիչների հետ անցկացնել քննարկումներ՝ ճանապարհային տվյալ տեղամասերում երթևեկությունը վերակազմակերպելու և ըստ այդմ նոր ճանապարհատրանսպորտային նշաններով կահավորելու նպատակով.

3) Մինչև 2022թ. մայիսի 1-ը ստուգել տվյալ տարածքի ոստիկանության բաժնում դիմումների, բողոքների և առաջարկությունների հաշվառման այբբենական մատյանների՝ 2021թ. դեկտեմբեր, 2022թ. հունվար և փետրվար ամիսներին վերաբերող տեղեկատվությունը; վերհանել բոլոր այն դեպքերը, որոնք ենթակա են եղել գրանցման հաղորդումների էլեկտրոնային գրանցամատյանում, սակայն չեն գրանցվել այնտեղ, ինչպես նաև բոլոր այն դեպքերը, երբ ստանալով քաղաքացիների դիմումները՝ ոստիկանության աշխատակիցները ձեռնարկել են որոշակի դատավարական գործողություններ /օրինակ՝ բացատրություններ են վերցրել/, որոնք ուղղված են եղել դրանցում պարունակվող տեղեկությունները քննարկելուն, ստուգելուն և լուծելուն, որից հետո, սակայն, խախտելով ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԴ/0635/11/19 գործով արտահայտած դիրքորոշումը, դիմումը թողնվել է անհետևանք: Նշված բոլոր դեպքերով կիրառել դատախազական ներգործության միջոցներ և արձանագրված արդյունքների մասին մինչև 2022թ. հունիսի 15-ը հայտնել ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն:

4) Ապահովել ստորաբաժանման յուրաքանչյուր նոր դատախազի կողմից ՀՀ գլխավոր դատախազի հրամաններին և հանձնարարականներին, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումների, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի հանձնարարականներին հնարավոր սեղմ ժամկետներում ծանոթացումը.

5) ՀՀ քրեական օրենսգրքի 202-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով քննվող քրեական գործերով քննության ընթացքում անշեղորեն ապահովել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 202-րդ հոդվածին վերաբերելի 21.04.2021թ. տրված հանձնարարականի դրույթները, ինչպես նաև.

ա) Հոլոգրաֆիկ ժապավենի բացակայությամբ, բայց Կենտրոնական բանկի կողմից թողարկված փողի իրացման դեպքերը չդիտարկել որպես ՀՀ քրեական օրենսգրքի 202-րդ հոդվածի իմաստով կեղծ փողի իրացում: Նշված դեպքերում քննարկման առարկա դարձնել իրացնելու նպատակով կեղծ փողեր պատրաստելու նախապատրաստության հատկանիշներով քրեական գործ հարուցելու հարցը:

բ) Թղթադրամի՝ կեղծ և իսկական մասեր ունենալու դեպքում այն դիտարկել որպես ՀՀ քրեական օրենսգրքի 202-րդ հոդվածով նախատեսված հանցագործության առարկա՝ համապատասխան քրեաիրավական գնահատական տալով կատարված արարքին:

6) ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 6-րդ մասով ամրագրված դրույթի կիրառման հիմքերի մասին հետևություն կատարելիս հաշվի առնել հետևյալը.

ա) հանդիսանում է արդյոք հանձնումը ազատ և գիտակցված ընտրության արդյունք, կատարվել է հանցավոր գործունեությունը շարունակելու, հանցագործության առարկան այլ կերպ տնօրինելու իրական հնարավորության և ողջամտորեն դրա գիտակցելու պայմաններում, թե ոչ:

բ) արգելված առարկաների շրջանառության վերաբերյալ իրավապահ մարմինները ինչ բնույթի տեղեկություններ են ունեցել, դրանց ստացման աղբյուրը, արձանագրման ձևը, կոնկրետության և հավաստիության աստիճանը, ինչպես նաև այն հանգամանքը, թե առկա տեղեկատվությունը օբյեկտիվորեն ընձեռել է հնարավորություն՝ հանցագործության առարկան հայտնաբերելու համար անհրաժեշտ դատավարական գործիքակազմը կիրառելու համար:

4. ՀՀ գլխավոր դատախազության՝ քրեական գործերով անմիջական հսկողություն իրականացնող վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի, կայազորների զինվորական դատախազներին, ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազներին և դատախազին, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազին՝

1) Ստորաբաժանման դատախազների կողմից միջնորդագրերի ներկայացման արդյունքում իրավախախտումներ ծնող պատճառների և պայմանների վերացման կամ նվազեցման, իրավասու մարմինների կողմից միջնորդագրերի ներկայացման արդյունքում ձեռնարկված թիրախավորված գործողությունների և դրանց արդյունքների մասին հնարավոր սեղմ ժամկետներում հայտնել ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Գ. Աբրահամյանին.

2) Բացառել անձնական կամ գործնական հարաբերություններով պայմանավորված դատավարական ակտերի կայացումը: Այդպիսիք ենթակա են կիրառման բացառապես օբյեկտիվ՝ այդպիսի հիմքեր հայտնաբերելու պահին և ոչ հետագայում՝ պայմանավորված ցանկացած սուբյեկտիվ, անընդունելի շարժառիթներով, ինչպես նաև ոչ ընտրանքային: Ծառայողական քննություն անցկացնելու միջնորդությունների մեջ հստակ մատնանշման են ենթակա բոլոր այն կոնկրետ քրեադատավարական գործողությունները, որոնք քննիչը պարտավոր էր կատարել, ինչպես նաև թույլ տրված թերացումները.

3) Հետաքննության մարմնի աշխատակցին կամ քննիչին տվյալ գործով քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացնելու որոշումները պետք է կայացվեն բացառապես այն դեպքերում, երբ վարույթի ընթացքում վերջիններիս դրսևորած վարքագիծը ողջամիտ հիմքեր է տալիս կասկածի տակ դնելու իրականացվող նախաքննության օբյեկտիվությունը և անաչառությունը.

4) Հետևողականորեն պահպանել Հայաստանի Հանրապետության դատախազությունում քաղաքացիների ընդունելության կարգը սահմանող՝ ՀՀ գլխավոր դատախազի 2017թ. փետրվարի 10-ի N 15 հրամանի դրույթները, դրսևորել նախաձեռնողականություն քաղաքացիների և դատավարության մասնակիների ընդունելությունների կազմակերպման հաճախակիացման նպատակով:

5) Անշեղորեն ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի հիմքով քրեական գործ հարուցելը մերժելու և քրեական հետապնդում չիրականացնելու, քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում կայացնելու պայմանների վերաբերյալ աշխատանքային կարգով տրամադրված ուղեցույցի պահանջները

6) Դատարանների կողմից կալանավորում խափանման միջոցը կիրառելու միջնորդությունը մերժելու և դրա արդյունքում մեղադրյալի կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու, մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին

մասի 1-5-րդ կետերով սահմանված արարք կատարելու, ինչպես նաև արդարացման դատավճիռ կայացվելու, դրա բեկանվելու և ամբաստանյալի կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու յուրաքանչյուր դեպքում այդ մասին հայտնել ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Գ. Աբրահամյանին.

7) Ապահովել, որպեսզի դատական նիստերից բացակայությունը պայմանավորված լինի բացառապես օբյեկտիվ պատճառներով, նման յուրաքանչյուր դեպքում այդ մասին նախապես գրավոր հայտնվի դատարանի աշխատակազմ՝ նշելով բացակայության պատճառները.

8) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկատվությունը ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն ուղարկելուց հետո ապահովել տեղեկատվության փոխանակում տվյալ քրեական գործով նախաքննության ընթացքի, հնարավոր նոր գույքերի տվյալների և ապօրինի գույքի բռնագանձման գործընթացի համար կարևորություն ներկայացնող այլ տվյալների վերաբերյալ.

5. ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետին, Շիրակի, Լոռու, Սյունիքի մարզի դատախազներին՝

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության գործառույթի շրջանակներում ապահովել հանրային և մասնավոր շահերի հավասարակշռությունը, ազատությունից զրկման վայրերում պահվող անձանց իրավունքների հավասարակշռված պաշտպանությունը: Ազատությունից զրկման վայրերում պահվող անձանց գործերի ուսումնասիրությունների արդյունքում, օրինապահ, դրական վարքագծի արձանագրման դեպքում բավարար հիմքերի առկայությամբ նախաձեռնել նրանց խրախուսման, պատիժը կրելու առավել մեղմ ռեժիմի տեղափոխման կամ օրենքով սահմանված այլ գործընթացներ:

6. ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետին

1) Մինչև 2022թ. ապրիլի 20-ը կազմել ՀՀ գլխավոր դատախազի հրամանի նախագիծ՝ դատախազի հաշվետվության ձևի վերաբերյալ.

2) Մինչև 2022թ. սեպտեմբերի 1-ը ՀՀ գլխավոր դատախազին ներկայացնել ՀՀ դատախազության ստորաժանումների կողմից 2021թ. առաջին կիսամյակի և 2022թ. առաջին կիսամյակի ընթացքում ներկայայացված միջնորդագրերի քանակական փոփոխությունների միտումների վերաբերյալ տեղեկատվություն.

3) Ստուգել ՀՀ դատախազության ստորաբաժանումների կողմից ՀՀ գլխավոր դատախազի՝ 2017թ. փետրվարի 10-ի N 15 հրամանի համաձայն՝ քաղաքացիների պարտադիր ընդունելություն նախատեսող դրույթների կատարման վիճակը և արդյունքների մասին մինչև 2022թ. հուլիսի 1-ը հայտնել ՀՀ գլխավոր դատախազին.

4) Մինչև 2022թ. հուլիսի 1-ն ամփոփել սույն որոշման 3-րդ կետի 3-րդ ենթակետի կատարման արդյունքում ստացված տեղեկատվությունը և նախապատրաստել ՀՀ գլխավոր դատախազի գրության նախագիծ՝ ուղղված ՀՀ ոստիկանության պետին՝ արձանագրված թերացումների և խախտումների մատնանշմամբ:

7. ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Գ. Աբրահամյանին

Նախապես ՀՀ գլխավոր դատախազին զեկուցելուց հետո՝ ապահովել բոլոր այն դեպքերի հանրայնացումը, որոնցով դատարանների կողմից կալանքը որպես խափանման միջոց կիրառելու միջնորդությունը մերժելուց հետո մեղադրյալը դրսևորել է ոչ իրավաչափ

վարքագիծ, ինչպես նաև արդարացման դատավճիռ կայացվելու, դրա բեկանվելու և ամբաստանյալի կողմից ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելու դեպքերը

ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ՝ Ա.ԴԱՎԹՅԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Ա.ՄԱՐՈՒԽՅԱՆ